ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ՀԱՍՄԻԿ ԱՐՏԱԿԻ

# ԱՆՁԻ ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ

**ԺԹ. 00.03 - «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ
հոգեբանական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

## ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2026

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

| | |
|---|---|
| Գիտական ղեկավար՝ | Հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ<br>**Էլինա Վյաչեսլավի Ասրիյան** |
| Պաշտոնական ընդդիմախոսներ՝ | Հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆ. **Կամո Երեմի Վարդանյան**<br><br>Հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ **Նարինե Ասքանազի Հարությունյան** |
| Առաջատար կազմակերպություն | **Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարան** |

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2026թ. հուլիսի 7-ին, ժ. 14:00-ին Երևանի պետական համալսարանին առընթեր գիտական աստիճաններ շնորհող ԲԿԳԿ-ի հոգեբանության 067 մասնագիտական խորհրդի նիստում:
Հասցեն՝ 0025, ք. Երևան, Աբովյան 52ա:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:
Սեղմագիրն առաքված է 2026 թ. հունիսի 5-ին:

Հոգեբանության 067 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ **Դ. Ռ. Հայրապետյան**

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Արդիականություն:** Քաղաքական դիրքորոշումների էության սահմանման, դրանց կառուցվածքային առանձնահատկությունների բացահայտման, ինչպես նաև ձևավորման վրա ազդող արտաքին և ներքին գործոնների համակողմանի ուսումնասիրման խնդիրները շարունակում են մնալ ժամանակակից սոցիալական և վարքաբանական գիտությունների, մասնավորապես՝ հոգեբանության, առանցքային ուղղություններից մեկը՝ պայմանավորելով այս երևույթի միասնական, տեսականորեն հիմնավորված մոդելի մշակման գիտական անհրաժեշտությունը: Քաղաքական դիրքորոշումները, որպես համալիր և բազմաչափ երևույթ, միաժամանակ գտնվում են մի շարք գիտակարգերի ուսումնասիրության տիրույթում: Մասնավորապես, հոգեբանությունը, քաղաքագիտությունը, սոցիոլոգիան և նեյրոգիտությունը քաղաքական ընտրության և դիրքորոշումների ձևավորումը դիտարկում են տարբեր մեթոդաբանական և տեսական դիտանկյուններից:

Քաղաքագիտական մոտեցումները հիմնականում շեշտադրում են ժողովրդագրական և սոցիալական գործոններով պայմանավորված էլեկտորալ վարքի օրինաչափությունները, մինչդեռ հոգեբանական ուղղությունները խնդիրը վերլուծում են առավել խորքային մակարդակում՝ անդրադառնալով քաղաքական դիրքորոշումների կոգնիտիվ, հուզական և վարքային բաղադրիչներին, ինչպես նաև դրանց դրսևորման օրինաչափություններին, որոնք իրենց արտացոլումն են գտնում քաղաքական դիրքորոշումների մի շարք նկարագրական մոդելներում (Է.Դաունս, Հ. Սայմոն 1957, Ֆ. Կոնվերս, 1964, Ս. Պոպկին, 1991, Ջ. Սալեր, 1992, Ջ. Ջոսթ, 2000):

Վերջին տարիներին զարգացում են ապրում նաև էլեկտորալ վարքի և քաղաքական դիրքորոշումների միջև եղած կապի բացահայտման նեյրոգիտական ուսումնասիրությունները, որոնք ցույց են տալիս, որ անձի կենսաբանական և նյարդահոգեբանական առանձնահատկությունները կարող են նշանակալի դեր ունենալ քաղաքական դիրքորոշումների ձևավորման գործընթացում (Ռ. Կանայի, Թ. Ֆեյիլդենի, 2011, Դ. Ռ. Պետալաս, 2024):

Մյուս կողմից ի հայտ են գալիս հասկացության հստակեցման խնդիրներ, որոնք պայմանավորված են քաղաքական դիրքորոշումների ձևավորման ամբողջական և համակարգային նկարագրության սահմանափակ բնույթով:

Քաղաքական դիրքորոշումների բացատրության և նկարագրման փորձերը հաճախ կենտրոնանում են վերջինիս առանձին գործոնների վրա՝ բավարար չափով չբացահայտելով սոցիալական ազդեցությունների, կոնֆորմիստական միտումների և տեղեկատվության մշակման առանձնահատկությունների համակցված դերը քաղաքական որոշումների կայացման գործընթացում:

Վերոնշյալ խնդրի վերաբերյալ ժամանակակից մոտեցումները ներառում են այնպիսի գործոններ, որոնք առանցքային նշանակություն ունեն քաղաքական դիրքորոշումների ձևավորման գործընթացում: Մասնավորապես առանցքային է ինստիտուցիոնալ վստահության դերը, որը բնութագրվում է՝ արտաքին և ներքին քաղաքական գործընթացների նկատմամբ ունեցած դրական վերաբերմունքով:

Վերջինս սերտորեն առնչվում է անձի սուբյեկտիվ բարեկեցության դրսևորման մակարդակի հետ:

Վերոգրյալ գործոնների փոխկապակցվածությունը կարևոր նշանակություն ունի քաղաքական համակարգի հանդեպ վերաբերմունքի ձևավորման տեսանկյունից, սակայն քաղաքական դիրքորոշումների ձևավորման գործընթացում նշված գործոնների համակցված ուսումնասիրությունը գիտական և կիրառական առումով մինչ այսօր չբացահայտված խնդիր է, որտեղ էլ կայանում է աշխատանքի արդիականությունը:

**Հիմնահարցի նկարագրություն**: Քաղաքական տարբեր գործընթացներ և մասնավորապես քաղաքական դիրքորոշումների ձևավորման գործընթացը ուսումնասիրվել են տարբեր հեղինակների կողմից ինչպես ՀՀ-ում, այնպես էլ ամբողջ աշխարհում: ՀՀ-ում տվյալ հարցին անդրադարձել են մի շարք հոգեբաններ, մասնավորապես՝ Գ. Հարությունյան (2016), Մ.Մարգարյան (2018), Դ. Հայրապետյան (2016), Ի. Ղազարյան (2015), Ն. Մելքոնյան (2018), Է. Ասրիյան (2017): Հոգեբանական և սուբյեկտիվ բարեկեցության հիմնահարցերին անդրադարձել են ավելի մեծ թվով հեղինակներ, այդ թվում՝ Հ. Ավանեսյան (2021), Ս. Գևորգյան, Ն. Խաչատրյան (2025), Ն. Հակոբյան (2025), Մ. Միքայելյան (2022), Ա. Ալեքսանյան (2025), Լ. Ստեփանյան (2025), Ն. Հարությունյան (2024), Է. Ասրիյան (2017, 2025), Վ. Պապոյան (2025), Ա. Գալստյան (2025), Տ. Վաթյան (2025), Ա. Խաչատրյան (2025) և այլն:

Հետազոտության հիմնական հարցադրումը, կառուցվածքը և ուսումնասիրվող ընտրված գործոններն ու փոփոխականները հիմնված են մի շարք մոտեցումների վրա, դրանցից է, օրինակ, Ռ. Դ. Պուտնամի և Ֆ. Ֆուկոյամայի սոցիալական կապիտալի մոտեցումը (Putnam, R. D. 2000, Fukuyama, F. 1995), որը վստահությունը դիտարկում է որպես հասարակությանը միավորող գործոն, որը բարձրացնում է համագործակցությունը և միջանձնային մակարդակում, և ինստիտուտների հետ, ինչն իր հերթին բարելավում է անձի կյանքի որակն ու բարեկեցությունը:

Հետազոտությունները մատնանշում են, որ տարբեր հասարակություններում միջանձնային վստահությունն ունի դրական և կայուն կապ սուբյեկտիվ բարեկեցության, ինչպես նաև քաղաքական դիրքորոշումների հետ, օրինակ սոցիալական վստահության բարձր մակարդակը կարող է վերածվել ինստիտուցիոնալ և քաղաքական աջակցության (Popkin S. L., 1991, Gaina V. et al., 2020):

Սույն աշխատանքում «քաղաքական դիրքորոշումներ» հասկացությունը մեր կողմից դիտարկվում է որպես անձի քաղաքական նախատրամադրվածությունը պայմանավորող դինամիկ և գնահատողական կառուցվածք. թարգմանաբար անգլերեն՝ «political dispositions» և ռուսերեն՝ «политические диспозиции» եզրույթները:

2003 թվականին Ջ. Ջոսթի և այլ հեղինակների կողմից առաջարկվեց քաղաքական կողմնորոշումը նկարագրող ինտեգրատիվ մոդել, որի հիմնական և առանցքային բնութագրիչը նշված հասկացության բազմաչափ բնույթի

ներկայացումն էր: Ըստ այս մոդելի քաղաքական վարքը ներառում է, ինչպես կոգնիտիվ, վարքային այնպես էլ սոցիալական բաղադրիչներ (Jost J.T. et al., 2003): Նմանօրինակ մոդել են մշակել նաև Ջ. Դալեգին և այլ հեղինակներ, այս անգամ արդեն քաղաքական դիրքորոշումների բնորոշման համար: Համաձայն վերոնշյալ մոդելի վերջինս ներկայանում է՝ որպես համալիր համակարգ, որտեղ ներառվում են կոգնիտիվ, վարքային և հուզական բաղադրիչները: Այս մոդելը դիտարկում է դիրքորոշումները՝ որպես փոխկապակցված համակարգ՝ ներառելով համոզմունքները, զգացմունքներն ու վարքագծային միտումները և հայտնի է որպես դիրքորոշումների բազմաբաղադրիչ մոդել (Dalege J. et al., 2019):

Այժմ մեծ զարգացում են ապրում քաղաքական դիրքորոշումների ուսումնասիրմանը միտված նեյրոգիտական հետազոտությունները: Համաձայն Ռ. Կանայի և Թ. Ֆեյիլդենի իրականացրած հետազոտության արդյունքների, այնպիսի ուղեղային կառույցներ, ինչպիսիք են նշաձև մարմինը և առաջնային կեղևը, նշանակալի դեր ունեն դիրքորոշումների ձևավորման գործընթացում: Նշաձև մարմինը, որը կապված է վախի հետ, նշանակալի կապ ունի պահպանողական և կոնֆորմիստական-խուսափող վարքի հետ, մինչդեռ առաջնային կեղևը կապված է անորոշության հանդեպ հանդուրժողականության հետ, որն իր հերթին նպաստում է առավել լիբերալ և ինքնավար դիրքորոշումների ձևավորմանը (Kanai R. & Feilden T., 2011):

Ժամանակակից հետազոտությունները ընդգծում են սուբյեկտիվ բարեկեցության և քաղաքական համակարգի հանդեպ վերաբերմունքի միջև առկա կապի բացահայտման կարևորությունը: Ըստ այս մոտեցումների սուբյեկտիվ բարեկեցության բարձր մակարդակը դրական ազդեցություն ունի քաղաքական համակարգի հանդեպ վերաբերմունքի, ինչպես նաև սոցիալական վստահության ամրապնդման տեսանկյունից (Ասրիյան Է., 2018): Մյուս կողմից հետազոտողները նշում են, որ որքան դրական է քաղաքական համակարգի նկատմամբ վերաբերմունքը, այնքան ավելի բարձր է սուբյեկտիվ բարեկեցության մակարդակը (Gulevich A. N., et al., 2025):

Ըստ Յ. Էնավի և այլ հեղինակների իրականցրած հետազոտության՝ սուբյեկտիվ բարեկեցության և քաղաքական համակարգի հանդեպ վստահության ձևավորման գործընթացում մեծ է սոցիալ-քաղաքական իրադարձությունների, ինչպես նաև ճգնաժամերի՝ այդ թվում պատերազմական իրավիճակների, համավարակների դերը: Այստեղ տեսաբանները շեշտադրում են քոփինգ մեխանիզմների դերը, որոնք օգնում են ներքին ռեսուրսների վերականգնմանը: Վերոնշյալ հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ մարդկանց կողմից իրավիճակի նորովի գնահատումը կարող է նպաստել նրանց սուբյեկտիվ բարեկեցության մակարդակի բարձրացմանը: Մյուս կողմից, անձի հուզական վիճակի ճնշումը հանգեցնում է անհանգստության աճի և ընդհանուր տագնապայինության բարձր մակարդակի, որն էլ իր հերթին անդրադառնում է ընդհանուր բարեկեցության անկման վրա (Enav Y., 2024):

Քաղաքական դիրքորոշումների ձևավորման գործընթացի ուսումնասիրման մեջ վերջին տարիներին առանձնահատուկ ուշադրություն է դարձվում նաև քաղաքական անտեսման և ռացիոնալ անուշադրության հայեցակարգերին: Այս մոտեցումները ցույց են տալիս, որ քաղաքացիները սահմանափակ ժամանակային և ճանաչողական ռեսուրսների պայմաններում տեղեկատվությունը մշակում են ընտրողական կերպով՝ նպատակ ունենալով նվազեցնել մտավոր ծանրաբեռնվածության մակարդակը: Արդյունքում քաղաքական որոշումները հաճախ ձևավորվում են ոչ թե ամբողջական տեղեկատվության հիման վրա, այլ մասնակի և ֆիլտրված:

Ռացիոնալ անուշադրության տեսությունը ենթադրում է, որ տեղեկատվության մշակումը մեծ ջանք պահանջող գործընթաց է, ուստի անձը հակված է կենտրոնանալ առավել պարզ, հուզական կամ անձնապես նշանակալի հաղորդագրությունների վրա: Սա հատկապես կարևոր է քաղաքական հաղորդակցության համատեքստում, որտեղ պարզեցված և նշանակալի ուղերձները կարող են էականորեն ազդել դիրքորոշումների ձևավորման վրա: Այս համատեքստում քաղաքական անտեսման և ռացիոնալ անուշադրության մեխանիզմները կարող են նաև միջնորդվել ինստիտուցիոնալ վստահության և սուբյեկտիվ բարեկեցության մակարդակով, որոնք էլ իրենց հերթին որոշակի են դարձնում անձի քննադատական մոտեցումը քաղաքական տեղեկատվության մշակման գործընթացում: Վերըշարադրածը ընդգծում է ոչ միայն ուսումնասիրվող հիմնախնդրի արդի վիճակը, այլև ցույց է տալիս առկա բացթողումները, դրանք գիտականորեն հիմնավորված մոտեցումներով և տվյալներով լրացնելու և այդ նպատակով հետագա հետազոտությունները կազմակերպելու անհրաժեշտությունը:

Աշխատանքի **նպատակն է՝** ուսումնասիրել և վերլուծել անձի սուբյեկտիվ բարեկեցությունն ու վստահությունը՝ որպես քաղաքական դիրքորոշումների ձևավորման գործոններ:

**Խնդիրներ:**

1.Ուսումնասիրել քաղաքական դիրքորոշումների ընդհանուր բնութագիրը և դերը տարբեր գիտակարգերում:

2.Ուսումնասիրել քաղաքական դիրքորոշումները և էլեկտորալ վարքը հոգեբանական մի շարք տեսությունների, ինչպես նաև ռացիոնալ անուշադրության և քաղաքական անտեսման մոտեցումների շրջանակում:

3.Բացահայտել սուբյեկտիվ բարեկեցության և վստահության ընդհանուր բնութագիրը և դերը քաղաքական դիրքորոշումների ձևավորման համատեքստում:

4.Հետազոտել անհատական և ինստիտուցիոնալ վստահության դրսևորման հիմնական օրինաչափություններն ու դրսևորումները:

5.Վերլուծել սուբյեկտիվ բարեկեցության, վստահության և քաղաքական դիրքորոշումների փոխկապվածության բնույթը, առկա օրինաչափությունները:

6.Դուրս բերել տարիքով, սեռով և կրթական մակարդակով պայմանավորված՝ սուբյեկտիվ բարեկեցության, վստահության և քաղաքական դիրքորոշումների հիմնական տարբերություններն ու դրսևորման օրինաչափությունները:

Աշխատանքի **օբյեկտը՝** քաղաքական դիրքորոշումների սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները:

Աշխատանքի **առարկան՝** քաղաքական դիրքորոշումների ձևավորման վրա ազդող գործոնները՝ մասնավորապես վստահությունն ու սուբյեկտիվ բարեկեցությունը:

**Հետազոտական վարկած՝** Ենթադրվում է, որ անձի սուբյեկտիվ բարեկեցությունն ու վստահությունը, որպես փոխկապակցված սոցիալ-հոգեբանական գործոններ, փոխազդում են քաղաքական դիրքորոշումների հետ. մասնավորապես դրանց ավելի բարձր մակարդակները կապված են քաղաքական դիրքորոշումների առավել ռացիոնալ և ինքնավար դրսևորումների հետ, մինչդեռ ավելի ցածր մակարդակների դեպքում մեծանում է հուզական և արտաքին գործոնների ազդեցությունների դերը:

**Տեսամեթոդական հիմք:** Ելնելով մեր թեմայի նպատակից և խնդիրներից աշխատանքի ձևավորման համար տեսամեթոդաբանական հիմք են հանդիսացել մի շարք կոնցեպտուալ մոտեցումներ, որոնք միտված են քաղաքական դիրքորոշումների ձևավորման գործընթացում անձի սուբյեկտիվ բարեկեցության և վստահության գիտական մեկնաբանմանը: Ըստ այդմ աշխատանքում ներառվել են այնպիսի մոտեցումներ, ինչպիսիք են՝ Է. Էրիկսոնի և Ջ. Ռոտերի տեսությունները: Է. Էրիկսոնի վստահության ձևավորման վերաբերյալ մոտեցումը թույլ է տալիս վերջինս դիտարկել՝ որպես այլոց նկատմամբ վստահություն, մինչդեռ Ջ. Ռոտերի մոտեցումը այն դիտարկում է նաև ինստիտուցիոնալ համակարգում, որը թույլ է տալիս վստահության հասկացությունը դիտարկել երկու տարբեր մոտեցումների տրամաբանության շրջանակում:

Սուբյեկտիվ բարեկեցության հասկացության ուսումնասիրման համար հիմք են ծառայել Է. Դիների, աշխատանքները, որոնք հնարավորություն են տալիս տվյալ հասկացությունը դիտարկել որպես չափելի հոգեբանական կառուցվածք: Քաղաքական դիրքորոշումների ուսումնասիրման համատեքստում տեսական հիմք են հանդիսացել Դ. Ուզնաձեի, Գ. Օլպորտի աշխատանքները, իսկ քաղաքական վարքի մեկնաբանման համար առաջնորդվել ենք Ս. Աշի կոնֆորմիզմի տեսության սկզբունքներով:

Տեսամեթոդաբանական հիմքում առանցքային է նեյրոֆիզիոլոգիական մոտեցումների դերը, մասնավորապես Ռ. Կանայի և Թ. Ֆեյիլդենի, որոնք թույլ են տալիս քաղաքական դիրքորոշումները հստակ ձևակերպել և առանձնացնել երկբաղադրիչ մոդելի գաղափարը, որն էլ իր հերթին օպերացիոնալիզացվել է Ս. Աշի կոնֆորմիզմի և հեռանկարի տեսության շրջանակներում: Վերոնշյալ աշխատանքները ապահովել են թեմայի համապարփակ և ծավալուն ուսումնասիրումն ու հետազոտական բաղադրիչի արդյունավետ իրականացումը: Բացի այդ հիմք են ընդունվել գիտական հոգեբանության հիմնական սկզբունքները՝

համակարգայնության սկզբունքը, դետերմինացիայի և զարգացման սկզբունքը (Բ. Ֆ. Լոմով, Ա. Ն. Լեոնտև, Ս. Լ. Ռուբինշտեյն):

**Աշխատանքի տեսական նշանակություն:** Քաղաքական դիրքորոշումների վերաբերյալ առկա մոդելների վերլուծության արդյունքները հնարավորություն են տալիս ձևակերպել քաղաքական դիրքորոշումների միասնական սահմանում, որն էլ իր հերթին կարող է նպաստել հետագայում տվյալ հասկացության ավելի խորքային հետազոտմանը տարբեր սոցիալմշակութային համատեքստներում:

Էմպիրիկ տվյալների հիման վրա ձևավորվել է կոնցեպտուալ մոդել, որը հնարավորություն է տալիս քաղաքական դիրքորոշումները դիտարկել սոցիալ-հոգեբանական համատեքստում:

Սուբյեկտիվ բարեկեցության և վստահության նկարագրված բնութագրերը և բացահայտված դերը անձի քաղաքական դիրքորոշման ձևավորման գործընթացում գիտական նշանակություն ունեն սոցիալական հոգեբանության համար, քանի որ դրանց չափումները կարող են կանխատեսելի դարձնել անձի քաղաքական դիրքորոշումների բնույթը, քաղաքական վարքագծի սոցիալ-հոգեբանական դրսևորումները, դրանք պայմանավորող գործոնների բնույթն ու առանձնահատկությունները:

**Կիրառական նշանակություն:** Անընդհատ փոփոխվող աշխարհաքաղաքական և քաղաքական կոնտեքստներում, մեծացող անորոշության պայմաններում առավել քան երբևէ կարևորվում է անձի քաղաքական դիրքորոշումների ձևավորման, քաղաքական որոշումների և վարքի կանխատեսման հնարավորությունները, որոնք հիմնված կլինեն գիտահենք տվյալների վրա: Մեր թեկնածուական հետազոտությունը և ստացված տվյալները կարող են հիմք հանդիսանալ ինչպես ոլորտային այլ հետազոտությունների համար, այնպես էլ կիրառական սոցիալական և քաղաքական նորանոր զարգացումները, կայացվող որոշումները կանխատեսելու և կառավարելու համար: Սոցիալական հոգեբանության ոլորտում նմանօրինակ հետազոտությունը կարող է կիրառվել որպես քաղաքական դիրքորոշումների և սոցիալ-քաղաքական իրադարձություններում առկա օրինաչափությունների դուրս բերման, ինչպես նաև էլեկտորալ վարքի կանխատեսմանն ուղղված ուսումնասիրություն:

**Հետազոտության գիտական նորույթ:**

1.Հիմք ընդունելով սոցիալական հոգեբանության ժամանակակից զարգացման փուլում քաղաքական դիրքորոշումների ուսումնասիրման վերաբերյալ առկա տեսական մոտեցումների և հետազոտությունների բնույթն ու արձանագրված բացերը՝ մեր կողմից առաջարկվել է քաղաքական դիրքորոշումները դիտարկել որպես չափելի սոցիալ-հոգեբանական երկբաղադրիչ ֆենոմեն:

2.Հիմք ընդունելով քաղաքական դիրքորոշման երկբաղադրիչ կառուցվածքը՝ առաջարկվել է քաղաքական դիրքորոշումների հետազոտման հուսալի գործիք, որն անցել է վալիդիզացիայի բոլոր անհրաժեշտ փուլերը:

3.Առաջարկված է քաղաքական դիրքորոշումների ձևավորման գործընթացը նկարագրող կոնցեպտուալ մոդել, համաձայն որի քաղաքական դիրքորոշման

ձևավորումը պայմանավորված է սուբյեկտիվ բարեկեցությամբ և ինստիտուցիոնալ վստահությամբ:

**Հետազոտության կազմակերպումն ու մեթոդները:** Աշխատանքի համապարփակ ուսումնասիրության համար նպատակահարմար ենք գտել կիրառել թեստավորման և հարցարանային մեթոդները, որոնք ապահովում են տվյալների բարձր ֆորմալիզացիայի մակարդակ, իսկ որակական բաղադրիչի կազմակերպման նպատակով կիրառվել է փորձագիտական հարցման մեթոդը:

Սուբյեկտիվ բարեկեցության գնահատման նպատակով՝ (Սուբյեկտիվ բարեկեցության գնահատման մեթոդիկա», Սամոխվալովա Ա.Գ., Տիխոմիրովա Ե.Վ., Շիպովա Ն.Ս., Որիշնեվսկայա Օ.Ն, (Տեղայնացում և վերիֆիկացիա հայերեն տարբերակ, Ասրիյան Է., Կարապետյան Ն. (2022 թ.) կողմից): Վստահության մեթոդիկա՝ Ռոտերի միջանձնային վստահության չափման մեթոդիկա»՝ - Ս.Գ. Դոստովալովայի կողմից ադապտացված տարբերակ: Հարցարանային մեթոդ՝ մեր կողմից մշակված քաղաքական դիրքորոշումների գնահատման մեթոդիկա, ինչպես նաև մաթվիճակագրության մեթոդներ՝ տվյալների վերլուծության նպատակով: Որակական տվյալների ստացման նպատակով փորձագիտական հարցման մեթոդը:

Հետազոտությունը անցկացված էր 2023-2026 թթ., ներառում էր մի քանի փուլ և ամփոփված էր ՀՀ 2026 թվականի նախընտրական ժամանակահատվածում:

**Պաշտպանությանը ներկայացվող դրույթներ:**

1.Անձի սուբյեկտիվ բարեկեցության և քաղաքական դիրքորոշումների կապը մոդերացվում է վստահությամբ: Համաձայն հետազոտության արդյունքների՝ նշված կապը միջնորդավորվում է տարիքային փոփոխականով: Մասնավորապես, վաղ հասունության տարիքային փուլում նկատվում են միջանձնային վստահության և ռացիոնալության մակարդակների բարձր, իսկ կոնֆորմիզմի մակարդակի ցածր դրսևորվածություն, մինչդեռ միջին հասունության տարիքային փուլը բնութագրվում է միջանձնային վստահության ցածր, իսկ կոնֆորմիզմի մակարդակի բարձր արտահայտվածությամբ:

2.Քաղաքական դիրքորոշումների կառուցվածքում կարևորագույն բաղադրիչներ են հանդիսանում ռացիոնալությունն ու կոնֆորմիզմը և դրանց դրսևորման մակարդակները: Վերոգրյալ բաղադրիչների միջև եղած կապը բնութագրվում է հակադարձ համեմատական բնույթով և պայմանավորված է տարիքային գործոնով:

3.Վստահությունը և սուբյեկտիվ բարեկեցությունը հանդես են գալիս որպես անձի քաղաքական դիրքորոշումները պայմանավորող սոցիալ-հոգեբանական գործոններ, որոնց կապը քաղաքական դիրքորոշումների հետ պայմանավորված է տարիքով և կրթական մակարդակով: Կրթությունը՝ որպես անկախ փոփոխական պայմանավորում է անձի սուբյեկտիվ բարեկեցության և ռացիոնալության դրսևորման մակարդակները: Իր հերթին տարիքային գործոնը պայմանավորում է միջանձնային և ինստիտուցիոնալ վստահության, կոնֆորմիզմի և ռացիոնալության միջև առկա փոխկապակցվածությունը:

4.Անձի սուբյեկտիվ բարեկեցության և վստահության բարձր մակարդակները պայմանավորում են քաղաքական դիրքորոշումների ռացիոնալության բաղադրիչը և անձի բարձր ինքնավարությունը:

5.Քաղաքական դիրքորոշումների ձևավորման գործընթացում անձը, կիրառելով ռացիոնալ անուշադրությունը, հակված է ընդունել առավել պարզ, հասկանալի և իր համար նշանակալի քաղաքական տեղեկատվությունը՝ միաժամանակ անտեսելով մեծ վերլուծական ջանք կամ ներգրավվածություն պահանջող տեղեկատվությունը, որն անձի կողմից գնահատվում է՝ որպես ոչ էական:

6.Քաղաքական դիրքորոշումները հանդես են գալիս որպես դինամիկ սոցիալ-հոգեբանական կառույց, որի կառուցվածքային բաղադրիչներն են կոնֆորմիզմն ու ռացիոնալությունը, վերջիններիս դրսևորման մակարդակները արտացոլում են քաղաքական դիրքորոշումների չափելի բնույթը, ինչն էլ ամփոփված և հաստատված է մեր կողմից մշակված և վերիֆիկացված հարցարանում:

**Աշխատանքի փորձաքննությունը:** Ատենախոսության վերաբերյալ նյութերը ներկայացվել և քննարկվել են Երևանի պետական համալսարանի ընդհանուր հոգեբանության ամբիոնի ընդլայնված նիստերում, ինչպես նաև Երևանի պետական համալսարանի հոգեբանության գիտահետազոտական կենտրոնում, բացի այդ ստացված արդյունքները քննարկվել են «Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները» խորագրով 10-րդ միջազգային գիտաժողովի ընթացքում (2025):

Ատենախոսության թեմայով տպագրվել և տպագրության են հանձնվել շուրջ հինգ գիտական հոդվածներ, որոնցից երեքը ԲՈԿ-ի կողմից հաստատված գիտական հանդեսներում, իսկ երկուսը՝ Scopus գիտատեղեկատվական շտեմարանում ընդգրկված գիտական պարբերականներում:

**Կառուցվածք:** Աշխատանքը բաղկացած է բովանդակությունից, ներածությունից, երեք հիմնական գլուխներից, եզրակացությունից, գրականության ցանկից և հավելվածներից: Առաջին գլուխը նվիրված է քաղաքական դիրքորոշումների ուսումնասիրմանը, սահմանմանը, դրանց հիմնական օրինաչափությունների դրսևորմանը, ինչպես նաև այդ հասկացության վրա ազդեցություն ունեցող սոցիալ-հոգեբանական գործընթացների վերլուծությանը: Երկրորդ գլխում դիտարկվում է սուբյեկտիվ բարեկեցություն ու վստահություն ֆենոմենների բովանդակությունը և ուսումնասիրվում է դրանց դերը քաղաքական դիրքորոշումների ձևավորման և դրսևորման համատեքստում: Երրորդ գլուխը ներառում է վստահության, սուբյեկտիվ բարեկեցության և քաղաքական դիրքորոշումների ձևավորման գործընթացի հետազոտման գործընթացի նկարագրությունը, տվյալների ներկայացումն ու վերլուծությունը:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

**Ներածությունում** հիմնավորվել է ուսումնասիրվող թեմայի արդիականությունը, ներկայացվել է հիմնախնդրի գիտական մշակվածության

աստիճանը, հետազոտության նպատակներն ու խնդիրները, սահմանված հետազոտական վարկածը, օբյեկտը և առարկան, ինչպես նաև տեսամեթոդաբանական սկզբունքները: Հիմնավորվել են գիտական նորույթը և առաջադրվել են պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթները: Ինչպես նաև ներկայացվել են ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը, աշխատանքի փորձաքննությունը:

Ատենախոսության **առաջին գլխում՝** «Քաղաքական դիրքորոշումների և էլեկտորալ վարքի ձևավորման առանձնահատկությունները», համակողմանիորեն դիտարկվում են քաղաքական դիրքորոշումների կառուցվածքային և գործառույթային առանձնահատկությունները, ինչպես նաև դրանց դրսևորման հիմնական ձևերը՝ էլեկտորալ վարքի դրսևորման համատեքստում:

**1.1 ենթագլխում՝** «Քաղաքական դիրքորոշումների սահմանումն ու ընդհանուր բնութագիրը, գիտական հիմնախնդրի վերլուծություն», ներկայացվում են քաղաքական դիրքորոշումների սահմանման և բնութագրման հիմնական տեսական մոտեցումները: Դիտարկվում են դիրքորոշումների սոցիալական, կոգնիտիվ և ֆիզիոլոգիական մեկնաբանությունները՝ սկսած Վ. Թոմասի, Ֆ. Զնանեցկիի, Գ. Օլպորտի և Դ. Ուզնաձեի մոտեցումներից: Միաժամանակ ամփոփվում են քաղաքական դիրքորոշումների նկարագրական մոդելների հիմքում ընկած մոտեցումները, որոնք ընդգրկում են Է. Դաունսի ռացիոնալ ընտրության, Հ. Սայմոնի սահմանափակ ռացիոնալության, Ֆ. Կոնվերսի, Ս. Պոպկինի, Ջ. Սալերի և Ջ. Ջոսթի մոտեցումների շրջանակը:

**1.2 ենթագլխում՝** «Նեյրոֆիզիոլոգիական հետազոտությունների նկարագրությունը սոցիալ-քաղաքական վարքի ուսումնասիրման կոնտեքստում», ներկայացվում են քաղաքական դիրքորոշումների հոգեֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական հիմքերը: Առանձնակի դիտարկվում է նշաձև կորիզի և առաջնային կեղևի դերը քաղաքական դիրքորոշումների ձևավորման գործընթացում, որտեղ նշաձև կորիզի ակտիվությունը կապվում է պահպանողական և կոնֆորմիստական վարքի հետ, իսկ առաջնային կեղևը՝ տեղեկատվության մշակման և անորոշության նկատմամբ հանդուրժողականության հետ:

**1.3 ենթագլուխը՝** «Քաղաքական դիրքորոշումների սահմանումը և դերը հոգեբանական մոտեցումների շրջանակում», նվիրված է քաղաքական դիրքորոշումների ձևավորման և նկարագրման հիմնական հոգեբանական մոտեցումների վերլուծությանը: Ենթագլխում առանձնացվում են հոգեվերլուծական, կոգնիտիվիստական և դիսպոզիցիոնալ մոտեցումները, որոնք քաղաքական դիրքորոշումները մեկնաբանում են որպես բազմաշերտ հոգեբանական կառուցվածքներ:

**1.4 ենթագլխում՝** «ԶԼՄ-ները՝ որպես քաղաքական դիրքորոշումների փոփոխության վրա ազդող գործոն», ներկայացվում է էլեկտորալ վարքի ձևավորման գործընթացում լրատվամիջոցների ազդեցության և տեղեկատվության ընկալման սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները: ԶԼՄ-ները դիտարկվում են որպես քաղաքական տեղեկատվության տարածման և հանրային կարծիքի

ձևավորման հիմնական մեխանիզմներ, որոնք ազդեցություն են ունենում անձի ընկալումների, հուզական արձագանքների և վարքային կողմնորոշումների վրա:

**1.5 ենթագլխում՝** «Էլեկտորալ վարքի դրսևորման առանձնահատկությունները սոցիալ-քաղաքական համատեքստում», ներկայացվում է էլեկտորալ վարքի ձևավորման բազմագործոն բնույթը՝ ընդգրկելով սոցիալ-տնտեսական, դեմոգրաֆիական, գաղափարական և անհատական գործոնների համակցված ազդեցությունը որպես քաղաքական ընտրության կառուցվածքային հիմք:

**1.6 ենթագլուխը՝** «Ռացիոնալ անուշադրության և քաղաքական անտեսման դրսևորումները էլեկտորալ վարքում», նկարագրում է ռացիոնալ անուշադրության և քաղաքական անտեսման մեխանիզմներն ու հիմնական օրինաչափությունները: Վերջիններս ներկայացված են՝ որպես քաղաքական վարքում առկա վարքային մոդելների օրինաչափություններ, որտեղ առանձնակի տեղ է գրավում տեղեկատվության մշակման և վերլուծման սկզբունքները: Ըստ այդմ այս ենթագլխում ամփոփված են ՝ Ի. Սմինի, Բ. Քափլանի, Է. Դաունսի մոտեցումները, ինչպես նաև ռացիոնալ անուշադրության և դինամիկ որոշման կայացման մոդելները:

**Երկրորդ գլխում՝ «Սուբյեկտիվ բարեկեցության և վստահության ընդհանուր բնութագիր և քաղաքական գործընթացներում դերի վերլուծություն»,** ներկայացվում է սուբյեկտիվ բարեկեցության և վստահության բազմաշերտ տեսական ու կիրառական վերլուծությունը՝ ընդգծելով դրանց սոցիալ-հոգեբանական, ճանաչողական և քաղաքական նշանակությունը:

**2.1 ենթագլխում՝** «Սուբյեկտիվ բարեկեցության հասկացության ընդհանուր բնութագիրը», ներկայացվում է սուբյեկտիվ բարեկեցության ընդհանուր բնութագիրը՝ մի շարք տեսական մոտեցումների դիտարկման համատեքստում: Նկարագրված է սուբյեկտիվ բարեկեցության ձևավորման և զարգացման տեսական հիմնադրույթների համակարգված վերլուծությունը՝ ընդգծելով դրա բազմաչափ և միջգիտական բնույթը:

**2.2 ենթագլխում՝** «Սուբյեկտիվ բարեկեցության դրսևորումները սոցիալ-քաղաքական համատեքստում», ներկայացվում է սուբյեկտիվ բարեկեցության սոցիալ-քաղաքական նշանակության բազմաշերտ տեսական և կիրառական վերլուծությունը՝ ընդգծելով դրա պատմական ձևավորումն ու ժամանակակից մեկնաբանությունները: Միաժամանակ վերլուծվում են ճգնաժամային իրավիճակների՝ պատերազմի, համավարակի և սոցիալական անկայունության ազդեցությունները:

**2.3 ենթագլխում՝** «Վստահության ընդհանուր բնութագիրը և սահմանումը», քննարկվում է վստահության ֆենոմենը որպես բազմաշերտ սոցիալ-հոգեբանական երևույթ, որի միջոցով բացատրվում են ինչպես միջանձնային հարաբերությունները, այնպես էլ սոցիալական և քաղաքական համակարգերի ձևավորման և կայունության առանձնահատկությունները:

**2.4 ենթագլուխը՝** «Անորոշության դերը վստահության և քաղաքական վստահության ձևավորման գործընթացում», ներկայացնում է անորոշության և

վստահության փոխկապվածությունը: Անորոշությունը, ըստ Կահնեմանի և Տվերսկու տեսության, բնութագրվում է տեղեկատվության սահմանափակությամբ, արդյունքների անկանխատեսելիությամբ և ռիսկերի ոչ լիարժեք գնահատմամբ: Իսկ ճգնաժամային իրավիճակները՝ պատերազմը, համավարակը և սոցիալական անկայունությունը, դիտարկվում են որպես բարձր անորոշություն ունեցող իրավիճակային գործոններ:

**Երրորդ գլխում՝ «Վստահության և սուբյեկտիվ բարեկեցության գործոնների ազդեցության հետազոտությունը՝ քաղաքական դիրքորոշումների ձևավորման գործընթացի վրա»,** նկարագրվում է հետազոտության կազմակերպման հիմնական փուլերը, մեթոդների ընտրության հիմնավորումը, հետազոտության մեթոդաբանական կառուցվածքը և կիրառված հետազոտական գործիքակազմը: Որն էլ իր հերթին ամփոփում է քաղաքական դիրքորոշումների, սուբյեկտիվ բարեկեցության, վստահության և կոնֆորմիզմի փոխկապակցվածության ուսումնասիրումը՝ ՀՀ 2026 թ. խորհրդարանական ընտրությունների նախընտրական ժամանակահատվածում:

**3.1 ենթագլխում՝** «Հետազոտության կազմակերպում, մեթոդի և մեթոդիկաների ընտրության հիմնավորում», ներկայացվում է հետազոտության նախապատրաստական փուլը: Ինչպես նաև ներկայացվում են հետազոտության կազմակերպման հինգ հիմնական փուլերը:

**Հետազոտական ընտրանք:** Հետազոտության առաջին փուլին մասնակցել է 214 անձ: Իսկ հետազոտության որակական փուլին մասնակցել են 26 փորձագետներ՝ հոգեբանության և քաղաքագիտության ոլորտներից: Հետազոտության իրականացման համար աշխատանքում ներառվել են հետևյալ մեթոդիկաները՝

*«Սուբյեկտիվ բարեկեցության գնահատման մեթոդիկա»,* Սամոխվալովա Ա.Գ., Տիխոմիրովա Ե.Վ., Շիպովա Ն.Ս., Որիշնեվսկայա Օ.Ն, (Տեղայնացում և վերիֆիկացիա հայերեն տարբերակ, Ասրիյան Է., Կարապետյան Ն. կողմից (2022թ.):

*«Ռոտերի միջանձնային վստահության չափման մեթոդիկա»*՝ - Ս.Գ. Դոստովալովայի կողմից ադապտացված տարբերակ:

*«Քաղաքական դիրքորոշումների գնահատման մեթոդիկա»:* Ելնելով մեր կողմից ուսումնասիրվող գործոնի առանձնահատկությունից՝ մեր առջև խնդիր ենք դրել ձևավորել և մշակել քաղաքական դիրքորոշումների գնահատմանն ուղղված մեթոդիկա:

«*Քաղաքական դիրքորոշումների բաղադրիչների և դրանց ձևավորման գործընթացի վերաբերյալ փորձագիտական գնահատում»:*

Հետազոտական տվյալների վերլուծության նպատակով իրականացվել է կոռելյացիոն վերլուծություն, T-test, ինչպես նաև գծային ռեգրեսիոն վերլուծություն:

Աշխատանքի **3.2 ենթագլխում՝** «Հետազոտական տվյալների ներկայացում, վերլուծություն և մեկնաբանում», ամփոփված են հետազոտության ինչպես քանակական արդյունքների վերլուծությունները, այնպես էլ որակական

արդյունքները, ինչպես նաև նշված արդյունքների համադրման վերլուծական հիմնավորումները:

Հետազոտությունը կառուցված է անկախ և կախյալ փոփոխականների փոխկապակցված վերլուծության հիման վրա, որտեղ որպես անկախ փոփոխականներ են հանդես գալիս՝ տարիքը, սեռը և կրթական մակարդակը:

Հաշվի առնելով մեր թեմայի նպատակը և խնդիրները՝ իրականացրել ենք սուբյեկտիվ բարեկեցության, վստահության և քաղաքական դիրքորոշումների առանձին վերլուծություն՝ ըստ անկախ փոփոխականների: Ստացված արդյունքները վերլուծել ենք մաթվիճակագրական մեթոդների օգնությամբ: Նախքան տվյալների վերլուծությանը անդրադառնալը հարկ է նշել, որ իրականացվել է ստացված տվյալների նորմալ բաշխման գնահատում:

Անդրադառնալով տվյալների վերլուծությանը նշենք, որ Ստյուդենտի գործակցի կիրառման արդյունքում, կրթական մակարդակով պայմանավորված, արձանագրվել է սուբյեկտիվ բարեկեցության մակարդակի նշանակալի տարբերություն ($p = 0.033$, որտեղ $p < 0.05$): Ընդ որում, բարձրագույն որակավորման աստիճան ունեցող անձանց մոտ սուբյեկտիվ բարեկեցության առավել բարձր մակարդակ է արձանագրվել:

Հետազոտության հաջորդ առանցքային ուղղությունը վերաբերում է վստահության գործոնի ուսումնասիրմանը: Վստահության գործոնն ուսումնասիրվել է Ռոտերի մեթոդիկայի ադապտացված տարբերակի միջոցով: Վերջինս հնարավորություն է տալիս իրականացնել վստահության միանգամից երկու չափում՝ ինստիտուցիոնալ և միջանձնային:

Վստահության գործոնը երկու տարիքային խմբերում համեմատելու արդյունքում ստացել ենք հետևյալ պատկերը միջանձնային վստահության դեպքում՝ ($p=0.044$, $p <0.05$) և ինստիտուցիոնալ վստահության դեպքում՝ ($p=0.047$, $p <0.05$):

Վստահության և սուբյեկտիվ բարեկեցության գործոնները ևս ենթարկել ենք վերլուծության՝ ըստ Պիրսոնի կոռելյացիոն գործակցի: Արդյունքները ցույց տվեցին, որ սուբյեկտիվ բարեկեցությունն ունի վիճակագրորեն նշանակալի դրական կապ ինչպես միջանձնային վստահության ($r = 0.415$, $p < 0.01$), այնպես էլ ինստիտուցիոնալ վստահության ($r = 0.395$, $p < 0.01$) հետ: Այս մասին են վկայում նաև ռեգրեսիոն վերլուծության արդյունքները, որտեղ սուբյեկտիվ բարեկեցության աֆեկտիվ և կոգնիտիվ բաղադրիչները հանդես են գալիս որպես վստահության մակարդակի դրսևորման նշանակալի պայմանավորող գործոններ ($R^2= 0.186$):

Անդրադառնալով քաղաքական դիրքորոշումների ուսումնասիրության հարցին և հիմնվելով հետազոտության տրամաբանության վրա՝ հարկ ենք համարել դուրս բերել ռացիոնալության և կոնֆորմիզմի դրսևորման մակարդակները, պայմանավորված՝ տարիքային և կրթական փոփոխականներով:

Ռացիոնալության և կոնֆորմիզմի դեպքում երկու տարիքային խմբերում հնարավոր տարբերությունների համեմատության արդյունքում ռացիոնալության ցուցանիշը կազմել է $p = 0.04$, հետևաբար $p < 0.05$, ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ երկու տարիքային խմբերում ռացիոնալության մակարդակը նշանակալիորեն

տարբերվում է: Ստացված արդյունքները վկայում են այն մասին, որ տարիքային գործոնով պայմանավորված՝ կոնֆորմիզմի և ռացիոնալության ցուցանիշներն էականորեն տարբերվում են: Ընդ որում կոնֆորմիզմն առավել արտահայտված է միջին հասունության տարիքային փուլում գտնվող անձանց մոտ, իսկ ռացիոնալությունը՝ վաղ հասունության տարիքային խմբում:

Իրականացվել է նաև կրթական մակարդակով պայմանավորված տարբերությունների հետազոտում կրկին T-test-ի միջոցով: Ինչի արդյունքում արձանագրվել է կրթական մակարդակով պայմանավորված ռացիոնալության մակարդակի հետևյալ տարբերությունը՝ $p=0.04$ հետևաբար $p<0.05$, որը ցույց է տալիս, որ կրթական մակարդակով պայմանավորված ռացիոնալության դրսևորման մակարդակը երկու խմբերում էականորեն տարբերվում է:

Արդյունքների վերլուծման արդյունքում կարելի է եզրակացնել, որ անձի սուբյեկտիվ բարեկեցությունը՝ մասնավորապես աֆեկտիվ և կոգնիտիվ բաղադրիչները, հանդես են գալիս որպես վստահության հիմնական պայմանավորող գործոններ, իսկ վստահությունը՝ տարիքային գործոնի համատեքստում, կապված է ռացիոնալության և կոնֆորմիզմի դրսևորման մակարդակների հետ:

Ամբողջացնելով տեսական, հետազոտական և համեմատական վերլուծության արդյունքները՝ մեր կողմից փորձ է արվել ձևավորել քաղաքական դիրքորոշումների կոնցեպտուալ մոդել:




Նշում. * p < 0.05

Սեղմացված հաստ գծերը ցույց են տալիս վիճակագրորեն նշանակալի կապերը, կետագծերը ոչ նշանակալի կապերը, բարակ գծերը ոչ ուղիղ նշանակալի կապերը:

**Գծապատկեր 2.** Քաղաքական դիրքորոշումների ձևավորման նախնական-կոնցեպտուալ մոդելն արտահայտող գծապատկեր:

Ստացված քանակական արդյունքների վավերացման նպատակով իրականացվել է փորձագիտական հարցում, որին մասնակցել են ընդհանուր առմամբ 26 փորձագետներ՝ հոգեբաններ և քաղաքագետներ:

Հետազոտության որակական փուլի արդյունքները լրացուցիչ կերպով հաստատեցին քանակական վերլուծությունից ստացված եզրահանգումները: Մասնավորապես, ամրապնդվեց քաղաքական դիրքորոշումների երկբաղադրիչ

կառուցվածքի գաղափարը, համաձայն որի արտաքին անորոշության պայմաններում քաղաքական դիրքորոշումներն ու որոշումները հակված են դառնալ առավել հուզական:

Ինչպես նաև հարկ է նշել, որ սուբյեկտիվ բարեկեցության և քաղաքական դիրքորոշումների կապն ուղղորդվում է վստահության գործոնով: Այս մասին են վկայում ինչպես քանակական, այնպես էլ որակական հետազոտության վերլուծության արդյունքները: Ընդ որում, հարկ է նշել, որ վստահության և սուբյեկտիվ բարեկեցության դրսևորման բարձր մակարդակները կապված են ռացիոնալության և ինքնավարության առավել բարձր դրսևորումների հետ, մինչդեռ դրանց ցածր արտահայտվածության մակարդակները կապված են ռացիոնալության ցածր և կոնֆորմիզմի առավել բարձր դրսևորումների հետ:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տեսական և էմպիրիկ վերլուծության համադրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ սուբյեկտիվ բարեկեցությունը և վստահությունը հանդիսանում են փոխկապակցված գործոններ: Տեսական շրջանակում առանձնացված միջանձնային վստահության և սուբյեկտիվ բարեկեցության միջև առկա կապը հաստատվում է նաև իրականացված հետազոտության արդյունքներով: Մասնավորապես՝ ստացված տվյալները վկայում են, որ սուբյեկտիվ բարեկեցության աֆեկտիվ և կոգնիտիվ բաղադրիչները բարձր նշանակալիությամբ պայմանավորում են ինստիտուցիոնալ վստահության մակարդակը՝ հանդիսանալով վերջինիս ձևավորումը պայմանավորող գործոններ: Ստացված արդյունքները հաստատում են մեր կողմից առաջադրված վարկածը:
2. Հետազոտական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ սուբյեկտիվ բարեկեցության և վստահության կապը քաղաքական դիրքորոշումների հետ պայմանավորվում է կրթական և տարիքային փոփոխականների միջոցով: Մասնավորապես, կրթական մակարդակը գտնվում է նշանակալի փոխկապակցվածության մեջ ռացիոնալության և սուբյեկտիվ բարեկեցության հետ՝ հանդես գալով՝ որպես սուբյեկտիվ բարեկեցության և ռացիոնալության գործոնների միջև առկա կապը պայմանավորող փոփոխական: Ընդ որում բարձրագույն կրթություն ունեցող անձինք բնութագրվում են սուբյեկտիվ բարեկեցության և ռացիոնալության ավելի բարձր մակարդակներով, մինչդեռ միջնակարգ կրթություն ունեցողները՝ համեմատաբար ավելի ցածր ցուցանիշներով: Միաժամանակ, տարիքային գործոնը պայմանավորում է միջանձնային և ինստիտուցիոնալ վստահության, կոնֆորմիզմի և ռացիոնալության միջև առկա կապը: Ընդ որում վաղ հասունության շրջանում նկատվում է միջանձնային վստահության և ռացիոնալության ավելի բարձր մակարդակ՝ համադրված կոնֆորմիզմի ցածր արտահայտվածության հետ,

մինչդեռ միջին հասունության փուլում արձանագրվում է միջանձնային վստահության մակարդակի նվազում և կոնֆորմիզմի մակարդակի բարձրացում:

1. 3. Քաղաքական դիրքորոշումների տեսական ուսումնասիրության, ինչպես նաև նեյրոֆիզիոլոգիական հետազոտությունների վերաբերյալ համակողմ վերլուծության արդյունքում կարող ենք ասել, որ քաղաքական դիրքորոշումները կարելի է դիտարկել որպես երկբաղադրիչ համակարգ, որի հիմնարար բաղադրիչներն են՝ քաղաքական ռացիոնալությունը և կոնֆորմիզմը: Այս մոտեցումը հաստատվում է նաև փորձագիտական մեթոդի արդյունքում ստացված տվյալներով, որոնք նույնպես հաստատում են վերոնշյալ բաղադրիչների առանձնացման անհրաժեշտությունը: Վերոգրյալ բաղադրիչների չափման համար մշակված քաղաքական դիրքորոշումների գնահատաման մեթոդիկան թույլ է տալիս եզրակացնել, որ քաղաքական դիրքորոշումները կարելի է սահմանել՝ որպես չափելի սոցիալ-հոգեբանական ֆենոմեն:
3. Ռացիոնալ անուշադրության մոտեցման շրջանակում քաղաքական դիրքորոշումների ձևավորման գործընթացի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջինս բնութագրվում է տեղեկատվության ընտրողական մշակմամբ: Այս մասին են վկայում նաև փորձագիտական հարցման արդյունքները: Համաձայն որոնց, քաղաքական դիրքորոշումներ ձևավորելիս և որոշումներ կայացնելիս անձը հակված է սահմանափակելու տեղեկատվական աղբյուրները՝ անտեսելով ոչ էական տվյալները: Ինչպես նաև փորձագիտական հարցման արդյունքները վկայում են, որ քաղաքական դիրքորոշումների ձևավորումն ու որոշումների կայացումը փոխկապակցված գործընթացներ են, որոնք անորոշության պայմաններում ձեռք են բերում առավել հուզական բնույթ:
4. Ելնելով քանակական և որակական հետազոտության արդյունքների համադրական վերլուծությունից՝ կարելի է եզրակացնել, որ սուբյեկտիվ բարեկեցության և քաղաքական դիրքորոշումների միջև կապը միջնորդավորվում է վստահության գործոնով: Ռացիոնալությունը, որպես քաղաքական դիրքորոշումների բաղադրիչ, բնութագրվում է անորոշության նկատմամբ հանդուրժողականությամբ և որոշումների ինքնավարությամբ, մինչդեռ կոնֆորմիզմը՝ սոցիալական ազդակների նկատմամբ բարձր զգայունակությամբ, որն առավել ակնհայտ է դառնում անորոշության պայմաններում:

**Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում:**


1. Sargsyan, H. (2026). The investigation of the relationship between individual subjective well-being and political trust. *Modern Psychology Scientific Bulletin, 1*(18), 79–87.

2. Ասրիյան Է., Սարգսյան Հ. (2026). Քաղաքական դիրքորոշումների գնահատման մեթոդիկայի մշակում և հուսալիության ստուգում. Բանբեր Երևանի համալսարանի: Փիլիսոփայություն, հոգեբանություն, 17, 63–78.
3. Ասրիյան Է., Զազյան Ք., Սարգսյան Հ. (2025). Հոգեբանական բարեկեցությունը որպես առաջնորդի ընտրության սոցիալ-հոգեբանական գործոն. Բանբեր Երևանի համալսարանի: Փիլիսոփայություն, հոգեբանություն, 16, 71–82.
4. Asriyan, E., Gevorgyan, R., Sargsyan, H., Makaryan, A., & Aghasyan, S. (2025). Real-time assessment of educational effectiveness using computer vision: A methodological framework demonstrated in a case study in Yerevan State University. Social Sciences & Humanities Open, 12, 102014. https://doi.org/10.1016/j.ssaho.2025.102014 Scopus Q1

**АСМИК САРГСЯН АРТАКОВНА**

# СУБЪЕКТИВНОЕ БЛАГОПОЛУЧИЕ И ДОВЕРИЕ ЛИЧНОСТИ КАК ФАКТОРЫ ФОРМИРОВАНИЯ ПОЛИТИЧЕСКИХ ДИСПОЗИЦИЙ

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.03- «Социальная психология». Защита диссертации состоится 7 июля 2026 г., в 14:00 на заседании специализированного совета по психологии 064 КВОН по присуждению ученых степеней при Ереванском государственном университете, по адресу: 0025, ул. Абовяна 52 а, Ереван, Армения.

## РЕЗЮМЕ

**Актуальность** исследования обусловлена необходимостью комплексного изучения сущности политических диспозиций, их структурных особенностей и факторов формирования. Политические диспозиции рассматриваются как многомерное явление, находящееся в поле изучения психологии, политологии, социологии и нейронауки. Политологические подходы акцентируют внимание на социальных и демографических факторах электорального поведения, тогда как психологические направления исследуют когнитивные, эмоциональные и поведенческие компоненты политических диспозиций (Э. Даунс, Г. Саймон, Ф. Конверс, С. Попкин, Дж. Заллер, Дж. Джост). Современные нейронаучные исследования также подчеркивают влияние биологических и нейропсихологических особенностей личности на формирование политических диспозиций. Несмотря на существующие подходы, проблема целостного и системного описания политических диспозиций остается недостаточно разработанной. Современные исследования нередко рассматривают отдельные факторы изолированно, не раскрывая взаимосвязь социальных влияний, конформизма и особенностей обработки информации в процессе принятия политических решений. Комплексное исследование указанных факторов в контексте формирования политических диспозиций определяет научную и практическую актуальность данной работы.

**Цель** диссертации заключается в изучении и анализе субъективного благополучия и доверия личности как факторов формирования политических диспозиций.

**Задачи исследования.**

1. Изучить общую характеристику политических диспозиций и их роль в различных научных дисциплинах.
2. Исследовать политические диспозиции и электоральное поведение в рамках ряда психологических теорий, а также подходов рациональной невнимательности и политического игнорирования.
3. Выявить общую характеристику субъективного благополучия и доверия, а также их роль в контексте формирования политических диспозиций.
4. Исследовать основные закономерности и проявления индивидуального и институционального доверия.
5. Проанализировать характер взаимосвязи субъективного благополучия, доверия и политических диспозиций, а также существующие закономерности.
6. Выявить основные различия и закономерности проявления субъективного благополучия, доверия и политических диспозиций, обусловленные возрастом, полом и уровнем образования.

**Объект исследования:** социально-психологические особенности политических диспозиций.

**Предмет исследования:** факторы, влияющие на формирование политических диспозиций, в частности доверие и субъективное благополучие.

**Гипотеза исследования:** предполагается, что субъективное благополучие и доверие личности, как взаимосвязанные социально-психологические факторы, взаимодействуют с процессом формирования политических диспозиций. В частности, более высокий уровень данных факторов связан с более рациональными и автономными проявлениями политических диспозиций, тогда как при более низком уровне усиливается роль эмоциональных и внешних факторов воздействия.

**Научная новизна исследования:**

1. На основе анализа современных теоретических подходов и исследований политических диспозиций в социальной психологии, а также выявленных научных пробелов, политические диспозиции предложено рассматривать как измеряемый двухкомпонентный социально-психологический феномен.
2. Исходя из двухкомпонентной структуры политических диспозиций, предложен надежный инструмент их исследования, прошедший все необходимые этапы валидации.
3. Предложена концептуальная модель формирования политических диспозиций, согласно которой процесс их формирования обусловлен субъективным благополучием и институциональным доверием.

**Теоретическая и практическая значимость** диссертации заключается в возможности комплексного изучения политических диспозиций в социально-психологическом контексте. Анализ существующих моделей позволил сформулировать более целостное понимание политических диспозиций и разработать концептуальную модель их формирования. Выявленная взаимосвязь субъективного благополучия, доверия и политических диспозиций имеет научное значение для социальной психологии, поскольку позволяет прогнозировать особенности политического поведения и электоральных проявлений личности. Полученные эмпирические данные могут быть использованы как в дальнейших научных исследованиях, так и в прикладной сфере для анализа и прогнозирования социально-политических процессов, политических решений и электорального поведения в условиях возрастающей неопределенности и изменяющегося геополитического контекста.

**Апробация результатов исследования:** Материалы диссертации были представлены и обсуждены на расширенных заседаниях кафедры общей психологии (Ереванский государственный университет), а также в Научно-исследовательском центре психологии (Ереванский государственный университет). Кроме того, полученные результаты были обсуждены в рамках 10-й международной конференции «Современные проблемы теоретической и прикладной психологии» (2025). По теме диссертации опубликовано и принято к публикации около пяти научных статей, из которых три в научных журналах, утвержденных ВАК, а две в научных изданиях, индексируемых в базе данных Scopus.

**Структура диссертации:** Диссертация состоит из содержания, введения, трех основных глав, заключения, списка литературы и приложений. Первая глава посвящена изучению и определению политических диспозиций, основным закономерностям их проявления, а также анализу социально-психологических процессов, влияющих на данный феномен. Во второй главе рассматривается содержание феноменов субъективного благополучия и доверия, а также исследуется их роль в контексте формирования и проявления политических диспозиций. Третья глава включает описание процесса исследования доверия, субъективного благополучия и формирования политических диспозиций, а также представление и анализ полученных данных

**SARGSYAN HASMIK ARTAK**

# PERSON'S SUBJECTIVE WELL-BEING AND TRUST AS FACTORS IN THE FORMATION OF POLITICAL DISPOSITIONS

Dissertation thesis for the scientific degree of PhD in psychological sciences in speciality 19.00.03 – Social Psychology. The defence of the dissertation will be held on July 7, 2026, at 14:00 at the session of the Specialized Council 064 in Psychology of the HESC of the Republic of Armenia at Yerevan State University. Address: 0025, Yerevan, st. Abovyan 52 a.

## SUMMARY

**Relevance of the study** is determined by the need for a comprehensive study of the essence of political disposition, its structural features, and the factors of its formation. Political dispositions are considered a multidimensional phenomenon within the scope of psychology, political science, sociology, and neuroscience. Political science approaches emphasize social and demographic factors of electoral behavior, whereas psychological approaches investigate the cognitive, emotional, and behavioral components of political dispositions (E. Downs, G. Simon, F. Converse, S. Popkin, J. Zaller, J. Jost). Contemporary neuroscientific research also highlights the influence of biological and neuropsychological characteristics of the individual on the formation of political dispositions. Despite existing approaches, the problem of a holistic and systematic description of political dispositions remains insufficiently developed. Modern studies often consider individual factors in isolation, without adequately revealing the interrelation of social influences, conformity, and information-processing characteristics in political decision-making processes. Institutional trust and subjective well-being acquire particular importance, as their interrelation influences attitudes toward the political system. A comprehensive investigation of these factors in the context of political disposition formation defines the scientific and practical relevance of this dissertation.

**The aim of the dissertation is** to study and analyze subjective well-being and individual trust as factors in the formation of political dispositions.

**The objectives of the study.**

1. To study the general characteristics of political dispositions and their role in various scientific disciplines.
2. To examine political dispositions and electoral behavior within the framework of several psychological theories, as well as approaches of rational ignorance and political apathy.
3. To identify the general characteristics of subjective well-being and trust and their role in the context of political disposition formation.
4. To investigate the main patterns and manifestations of individual and institutional trust.
5. To analyze the nature of the relationship between subjective well-being, trust, and political dispositions, as well as existing patterns.
6. To identify the main differences and patterns in subjective well-being, trust, and political dispositions depending on age, gender, and educational level.

**Object of the study:** socio-psychological characteristics of political dispositions.

**Subject of the study:** factors influencing the formation of political dispositions, in particular trust and subjective well-being.

**Research hypothesis:** it is assumed that subjective well-being and individual trust, as interrelated socio-psychological factors, interact with the process of political disposition formation. In particular, higher levels of these factors are associated with more rational and autonomous

manifestations of political dispositions, whereas lower levels strengthen the influence of emotional and external factors.

**The scientific novelty of the dissertation.**

1. Based on the analysis of contemporary theoretical approaches and studies of political dispositions in social psychology, as well as identified research gaps, political dispositions are proposed to be considered as a measurable two-component socio-psychological phenomenon.
2. Based on the two-component structure of political dispositions, a reliable research instrument was developed, which passed all necessary stages of validation.
3. A conceptual model of political disposition formation is proposed, according to which the formation process is determined by subjective well-being and institutional trust.

**Theoretical and practical significance of the dissertation** lies in the possibility of a comprehensive study of political dispositions in a socio-psychological context. The analysis of existing models made it possible to formulate a more integrated understanding of political dispositions and to develop a conceptual model of their formation. The identified relationship between subjective well-being, trust, and political dispositions is of scientific importance for social psychology, as it enables the prediction of political behavior and electoral patterns. The obtained empirical data may be used both in further scientific research and in applied fields for analyzing and forecasting socio-political processes, political decisions, and electoral behavior under conditions of increasing uncertainty and a changing geopolitical context.

**Approbation of research results:** The materials of the dissertation were presented and discussed at expanded meetings of the Department of General Psychology, Yerevan State University, as well as at the Research Center of Psychology, Yerevan State University. In addition, the obtained results were discussed within the framework of the 10th International Conference "Contemporary Issues of Theoretical and Applied Psychology" (2025). Approximately five scientific articles have been published or accepted for publication on the topic of the dissertation, including three in journals approved by the Higher Attestation Commission of the Republic of Armenia and two in journals indexed in the Scopus database.

**The structure of the dissertation:** The dissertation consists of a table of contents, an introduction, three main chapters, a conclusion, a list of references, and appendices. The first chapter is devoted to the study and definition of political dispositions, their main patterns of manifestation, as well as the analysis of socio-psychological processes influencing this phenomenon. The second chapter examines the content of the phenomena of subjective well-being and trust, and explores their role in the formation and manifestation of political dispositions. The third chapter includes a description of the research process on trust, subjective well-being, and political disposition formation, as well as the presentation and analysis of the obtained data.